ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ

Հաստատված է
«Այդի Բանկ» ՓԲԸ վարչության նախագահի
7 հոկտեմբերի 2026 թվականի
№ 117-Լ կարգադրությամբ

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ԿՈՂՄԻՑ «ՍՏՈՊ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ԳՈՐԾԻՔԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 1. ՆՊԱՏԱԿԸ 2

ԳԼՈՒԽ 2. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ 2

ԳԼՈՒԽ 3. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ 3

ԳԼՈՒԽ 4. «ՍՏՈՊ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԳԵԼԱՓԱԿՈՒՄԸ 4

ԳԼՈՒԽ 5. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՊԱԱՐԳԵԼԱՓԱԿՈՒՄԸ 5

Սույն փաստաթուղթը հանդիսանում է «Այդի Բանկ» ՓԲԸ սեփականությունը:

Ոչ իրազորված վերարտադրությունը արգելված է

ԳԼՈՒԽ 1. ՆՊԱՏԱԿԸ

1. Սույն կանոնների նպատակն է սահմանել «Այդի Բանկ» ՓԲԸ-ում «Ստոպ ծառայություն» գործիքի միջոցով գործարքների բլոկավորման, ապաբլոկավորման գործընթացը, բլոկավորման ընթացքում Հաճախորդի սպասարկման հիմնական պայմանները և կանոնները:

ԳԼՈՒԽ 2. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

2. Սույն կանոններում օգտագործվող սահմանումներն ու հապավումներն ունեն հետևյալ նշանակությունը՝
   1) **Բանկ՝** «Այդի Բանկ» ՓԲԸ,
   2) **Կանոններ՝** «Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի կողմից «Ստոպ ծառայություն» գործիքի կիրառման կանոններ»,
   3) **Օգտատեր՝** Համակարգը օգտագործող,
   4) **Հաճախորդ՝** Իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր, ով հանդիսանում է Բանկի հաշվետեր, ընդ որում՝ սույն կանոններում «Հաճախորդ» տերմինն օգտագործվում է նկատի ունենալով նաև որպես Օգտատեր, այնքանով, որքանով տվյալ կարգավորումը կիրառելի կլինի Օգտատիրոջ նկատմամբ,
   5) **Օնլայն բանկինգ՝** IDBusiness.am հարթակի միջոցով Հաճախորդին իր հաշիվներով կատարված գործարքների վերաբերյալ տեղեկատվության դիտման և/կամ գործարք (այդ թվում՝ գործարքի հետ առնչվող գործողություններ) կատարելու հնարավորություն ստեղծող առցանց համակարգ,
   6) **Մոբայլ բանկինգ՝** IDBusiness Mobile բջջային հավելվածով Հաճախորդին իր հաշիվներով կատարված գործարքների վերաբերյալ տեղեկատվության դիտման և/կամ գործարք (այդ թվում՝ գործարքի հետ առնչվող գործողություններ) կատարելու հնարավորություն ստեղծող համակարգ,
   7) **Համակարգ՝** Հեռավար բանկային ծառայությունների մատուցման համակարգ (Օնլայն բանկինգ և/կամ Մոբայլ բանկինգ),
   8) **«Ստոպ ծառայություն» գործիքներ (Անվտանգության և ինքնասահմանափակման գործիքներ)՝** Համակարգերում հասանելի գործիքակազմ, որը հնարավորություն է տալիս Հաճախորդին իր նախաձեռնությամբ Համակարգերում սահմանափակել կամ արգելափակել մեկ, մի քանի կամ բոլոր հեռավար բանկային ծառայությունների հասանելիությունը, ինչպես նաև կառավարել անվտանգության կարգավորումները,

9) **Արգելափակում՝** Բանկի կողմից մատուցվող ծառայության հեռավար հասանելիության բլոկավորում՝ Հաճախորդի դիմումի հիման վրա,

10) **Ապաարգելափակում՝** Արգելափակված ծառայության հեռավար հասանելիության վերականգնումը Բանկի կողմից՝ Հաճախորդի դիմումի և համապատասխան նույնականացման հիման վրա,

11) **Նույնականացում՝** Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված կարգով Հաճախորդի/ Օգտատիրոջ նույնականացում,

12) **Իրավասու ներկայացուցիչ՝** Հաճախորդի գործադիր մարմնի ղեկավար կամ լիազորված անձ, ով իրավասու է Հաճախորդի անունից ներկայացնել ծառայությունների Արգելափակման և/կամ Ապաարգելափակման վերաբերյալ դիմումներ,

13) **Գաղտնաբառ՝** Օգտատիրոջ կողմից ստեղծվող տառերի, թվերի և սիմվոլների համակցություն, որը Համակարգի կողմից օգտագործվում է որպես Օգտատիրոջ նույնականացման միջոց և թույլ է տալիս մուտք գործել Համակարգ և օգտվել Համակարգում հասանելի ծառայություններից,

14) **PIN կոդ՝** Օգտատիրոջ կողմից ստեղծվող թվերի համակցություն, որը Համակարգի կողմից դիտվում է որպես Օգտատիրոջ էլեկտրոնային ստորագրություն և թույլ է տալիս նրան կատարել գործարքներ, ինչպես նաև կատարել Գաղտնաբառի ու Բանկի կողմից սահմանված որոշ տվյալների փոփոխություններ:

ԳԼՈՒԽ 3. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

3. Սույն Կանոնները սահմանում են Բանկի Հաճախորդների համար կիրառելի անվտանգության և ինքնասահմանափակման գործիքների օգտագործման կարգը, որոնք գործում են ի լրումն «Բանկի կորպորատիվ հաճախորդին հեռավար բանկային ծառայությունների մատուցման հրապարակային պայմանների» և նպատակ ունեն ապահովել Համակարգերում հաշիվների և միջոցների պաշտպանվածության բարձր մակարդակ:
4. «Ստոպ ծառայություն» գործիքի կիրառումը սահմանափակում է միայն ծառայությունների հեռավար հասանելիությունը: Այն չի դադարեցնում գործող պայմանագրերը և չի հանգեցնում բանկային հաշիվների, քարտերի, վարկերի կամ ավանդների փակման/դադարեցման: Հաճախորդը կարող է դիտել վերջիններիս կարգավիճակը, մնացորդները, իրականացնել գործարքներ Բանկի մասնաճյուղերում՝ Նույնականացում անցնելուց հետո:

5. Հեռավար բանկային ծառայությունների Արգելափակումը կիրառվում է ոչ թե առանձին Օգտատիրոջ համար, այլ Հաճախորդի համար և բոլոր Օգտատերերի համար Արգելափակվում են ընտրված ծառայությունները, իսկ Ապաարգելափակումից հետո ընտրված ծառայությունները Ապաարգելափակվում են բոլոր Օգտատերերի համար:
6. Մասնաճյուղում և Կոնտակտային կենտրոնի միջոցով ծառայությունների Արգելափակման/ Ապաարգելափակման դիմումի օրինակելի ձևը հաստատվում է Բանկի Վարչության նախագահի կարգադրությամբ:

ԳԼՈՒԽ 4. «ՍՏՈՊ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԳԵԼԱՓԱԿՈՒՄԸ

7. «Ստոպ ծառայություն» գործիքը հասանելի է Համակարգերում Հաճախորդի համար տեսանելի հատվածում և հնարավորություն է տալիս Հաճախորդներին արգելափակել ստորև ծառայություններից մեկը, մի քանիսը կամ բոլորը՝ միաժամանակ.
   1) Փոխանցումներ.
   ա. Փոխանցումներ դեպի «Այդի Բանկ» ՓԲԸ-ի այլ հաշիվներ,
   բ. Փոխանցումներ դեպի ՀՀ այլ բանկեր,
   գ. Փոխանցումներ ՀՀ պետական բյուջե,
   դ. Միջազգային փոխանցումներ,
   2) Հաշիվներ.
   ա. Բացել նոր հաշիվ,
   3) Վարկեր.
   ա. Նոր վարկի ստացում:
8. Սույն Կանոնների 7-րդ կետում նշված ծառայությունները հնարավոր է Արգելափակել Հաճախորդի կողմից նշված ծառայություններից օգտվելու դեպքում:
9. Սույն Կանոնների 7-րդ կետում նշված ծառայությունները բոլորը միաժամանակ հնարավոր է Արգելափակել «Ստոպ ծառայություն» գործիքի համար «Ընտրել բոլորը» կոճակը սեղմելու միջոցով:
10. Արգելափակման ենթակա ծառայությունների ընտրությունից հետո Հաճախորդը սեղմում է «Արգելափակել» կոճակը, որից հետո 60 վայրկյանի ընթացքում ցուցադրվում է հաղորդագրություն Արգելափակման վերաբերյալ և 60 վայրկյանի ընթացքում «Հաստատել» կոճակը չսեղմելու կամ «Չեղարկել» կոճակը սեղմելու դեպքում Արգելափակումը չի կատարվում:

11. «Հաստատել» կոճակը սեղմելուց հետո, գործարքը հաստատվում է PIN կոդի միջոցով, որից հետո Հաճախորդի կողմից ընտրված ծառայությունները Արգելափակվում են 60 վայրկյանի ընթացքում:
12. Արգելափակումից հետո Հաճախորդին ցուցադրվում է հաղորդագրություն՝ ծառայությունների բարեհաջող Արգելափակման վերաբերյալ, և Հաճախորդը դադարում է ունենալ ընտրված ծառայությունից հեռավար օգտվելու հնարավորություն:
13. Արգելափակման վերաբերյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Հաճախորդի էլեկտրոնային փոստին ուղարկվում է համապատասխան ծանուցում, որը պարունակում է տեղեկատվություն Արգելափակված ծառայությունների և Արգելափակման ամսաթվի, ժամի, Ապաարգելափակման եղանակի վերաբերյալ:
14. Համակարգերում ծառայությունների Արգելափակման դեպքում ցուցադրվում է վերջիններիս Արգելափակված կարգավիճակը:
15. Համակարգերի յուրաքանչյուր ծառայության բաժնում Օգտատերը տեսնում է ծառայության անվանումը, կարգավիճակը, կարգավիճակի փոփոխության ամսաթիվը և ում կողմից է փոփոխվել կարգավիճակը, Արգելափակման վերաբերյալ այլ տեղեկատվություն:
16. Սույն գլխում նկարագրված Արգելափակումը հնարավոր է իրականացնել նաև Բանկի ցանկացած մասնաճյուղ այցելելու կամ Կոնտակտային կենտրոնի հետ՝ +374 10 593311 կամ +374 10 593333 հեռախոսահամարներով կապ հաստատելու միջոցով:

ԳԼՈՒԽ 5. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՊԱԱՐԳԵԼԱՓԱԿՈՒՄԸ

17. Ապաարգելափակումն իրականացվում է բացառապես Հաճախորդի/Իրավասու ներկայացուցչի նախաձեռնությամբ:
18. Ապաարգելափակում կարող է իրականացվել Բանկի մասնաճյուղերում կամ Կոնտակտային կենտրոնի հետ՝ +374 10 593311 կամ +374 10 593333 հեռախոսահամարներով կապ հաստատելու միջոցով՝ Հաճախորդի կամ Իրավասու ներկայացուցչի կողմից ներկայացված համապատասխան դիմումի հիման վրա:
19. Նախքան Ապաարգելափակումը Բանկն իրականացնում է Հաճախորդի/Իրավասու ներկայացուցչի պարտադիր Նույնականացում՝ համաձայն Բանկի ներքին իրավական ակտերի:
20. Կոնտակտային կենտրոնի միջոցով ներկայացված Ապաարգելափակման դիմումը Բանկը բավարարում է ոչ շուտ, քան Արգելափակման պահից 24 (քսանչորս) ժամ հետո,

բացառությամբ այն դեպքերի, երբ Ապաարգելափակումն իրականացվում է Բանկի մասնաճյուղում համապատասխան դիմում ներկայացնելով:

21. Արգելափակման պահից 24 (քսանչորս) ժամը լրանալուց հետո, Կոնտակտային կենտրոնի միջոցով ներկայացված Ապաարգելափակման դիմումը Բանկը բավարարում է Ապաարգելափակման դիմումը ստանալուց հետո՝ առավելագույնը 24 (քսանչորս) ժամվա ընթացքում:
22. Շտապ կամ անհետաձգելի Ապաարգելափակում հնարավոր է միայն Հաճախորդի/ Իրավասու ներկայացուցչի ֆիզիկական ներկայությամբ՝ Բանկի մասնաճյուղերում:
23. Ապաարգելափակումից հետո ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Հաճախորդի էլեկտրոնային փոստին ուղարկվում է համապատասխան ծանուցում՝ Ապաարգելափակված ծառայությունների և Ապաարգելափակման ամսաթվի, ժամի վերաբերյալ:

Սույն փաստաթուղթը հանդիսանում է «Այդի Բանկ» ՓԲԸ սեփականությունը:

Ոչ լիազորված վերարտադրությունը արգելված է